600.0260.05.08.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

5 օգոստոսի 2020 թվականի №260Ա
ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2017 թվականի մայիսի 31-ի №218Ն որոշման 2-րդ կետով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) պարտավորեցվել է մինչև 2020 թվականի մարտի 1-ը վերակնքել բաժանորդների հետ կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերը,

բ) 2020 թվականի մարտի 24-ի №177-20 և հուլիսի 3-ի №386-20 գրություններով Ընկերությունը հայտնել է, որ էլեկտրական էներգիայի սպառում ունեցող բաժանորդների հետ վերակնքել է էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերի 89 տոկոսը: Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածմամբ երկրում ստեղծված իրավիճակով պայմանավորված Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298Ն որոշմամբ արտակարգ դրություն հայտարարելուց հետո մինչև դրա ավարտը Ընկերությունը դադարեցնում է բաժանորդի հետ անմիջական շփմամբ իրականացվող բոլոր գործառույթները: Միաժամանակ, Ընկերությունը հայտնել է, որ դադարեցրել է այն բաժանորդների էլեկտրամատակարարումը, որոնք տարբեր պատճառաբանություններով հրաժարվել են էլեկտրական էներգիայի մատակարարման նոր օրինակելի ձևին համապատասխան պայմանագրերի վերակնքումից, սակայն արտակարգ դրության հայտարարումից հետո էլեկտրամատակարարումը կրկին վերականգնվել է: Նշվածից ելնելով՝ Ընկերությունը խնդրել է ձեռնպահ մնալ տույժեր

կիրառելուց և արտակարգ դրության ավարտից հետո վերակնքման համար սահմանված ժամկետը երկարաձգել ևս վեց ամսով,

գ) Հանձնաժողովը, հաշվի առնելով Ընկերության 2020 թվականի հուլիսի 3-ի №386-20 գրությունը և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2020 թվականի հուլիսի 10-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 31-ի №218Ն որոշմամբ ամրագրված ժամկետում նշված որոշմամբ սահմանված էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևին համապատասխան պայմանագրերի վերակնքման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2020 թվականի հուլիսի 17-ի №416-20 գրությամբ ներկայացրել է պարզաբանումներ, համաձայն որոնց՝ Ընկերությունը գործնականում ավարտել է Հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 31-ի №218Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի նոր օրինակելի ձևին համապատասխան սպառողների հետ պայմանագրերի վերակնքման աշխատանքները, բացառությամբ այն դեպքերի, երբ առաջացել են որոշակի խոչընդոտներ (սպառողների իրավունքները կամ դրանց ձեռքբերումը հավաստող փաստաթղթերի բացակայություն, սպառողի բացակայություն հասցեից, սպառողի կողմից պայմանագրի վերակնքումից հրաժարում): Ընկերությունը պայմանագրերի վերակնքման գործընթացն ավարտին հասցնելու նպատակով վերստին խնդրել է ձեռնպահ մնալ տույժեր կիրառելուց և արտակարգ դրության ավարտից հետո վերակնքման համար սահմանված ժամկետը երկարաձգել ևս վեց ամսով,

ե) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 31-ի №218Ն որոշման 2-րդ կետով ամրագրված պահանջը՝ մինչև 2020 թվականի մարտի 1-ը չի վերակնքել բաժանորդների հետ կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերը և մինչև հիշյալ ժամկետի ավարտը չի դիմել Հանձնաժողով՝ այն երկարաձգելու համար: Ինչ վերաբերում է Ընկերության հիմնավորումներին, ապա դրանք չեն կարող դիտվել որպես հիշյալ խախտման համար պատասխանատվության չկիրառման հիմք, քանի որ արտակարգ դրությունը Հայաստանի Հանրապետությունում հայտարարվել և համապատասխան սահմանափակումները կիրառվել են սույն թվականի մարտի 16-ից, մինչդեռ համապատասխան պայմանագրերի վերակնքման ժամկետը սահմանված է եղել մինչև

նույն թվականի մարտի 1-ը, և Ընկերությունը զրկված չի եղել մինչև հիշյալ ժամկետի ավարտը դրա երկարաձգման համար Հանձնաժողով դիմելու հնարավորությունից, ինչը, ևս չի արել, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 31-ի №218Ն որոշման 2-րդ կետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

2. Ընկերությանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298Ն որոշմամբ հայտարարված արտակարգ դրության ավարտից հետո վեց ամսյա ժամկետում Հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 31-ի №218Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված օրինակելի ձևին համապատասխան վերակնքել բաժանորդների հետ կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերը:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
5 օգոստոսի 2020թ.